Ծուշանիկ Կուրղինյան

Ծառն ու քամին

Ծառը լալիս էր ու անիծում սանձարձակ քամուն:

Ոտքդ կոտրեր, տեղ չհասնեիր, անառակ քամի, ինչպես որ դու իմ կանաչ ճյուղը կոտրեցիր, այնպես էլ աստված սիրտդ կոտրե . . .

Քամին ձայն չհանեց, գրկեց ծառը, համբուրեց բոլոր ճյուղերն ու տերևները և թռավ գնաց:

Այնուհետև թուխպերը կախվեցին երկնքից, արևը մնաց սարերի հետևը, և սկսեց մաղել պաղ ու ձանձրալի անձրևը:

Ծառերը խշխշում էին ցրտահար, ջերմի ու լույսի կարոտ, երազում պայծառ օրերի երգն ու մեղեդին:

Աղջի՛, ձայնեց դարավոր կաղնին իր մոտի ծառին, ձայն տուր ամենքին, թող չոքեն աղոթք անեն, որ քամին գա, ցրե ամպերը, արևի երես տեսնենք:

Ա՜խ, հառաչեց ճղակոտոր ծառը, ես անիծել եմ քամուն, որ ոտքը կոտրի, տեղ չհասնի . . . Նա իմ կանաչ ճյուղն էր կոտրել . . .

Որ այդպես է, ընկիր ճամփա, գնա, չոքիր քամու առաջ, ներողություն խնդրիր, ասա թող գա, պաղ անձրևը մեզ մաշեց, հրամայեց կաղնին:

Ճղակոտոր ծառն ընկավ ճամփա, գնաց, գնաց, մի ընդարձակ դաշտ դուրս եկավ: Նա մոլորվեց . չգիտեր աջ գնա, թե ձախ . ուստի չոքեց մեծ ճամփու վրա,

աղաչեց քամուն ներել իր սխալը, դուրս գալ, ցրել մռայլ թուխպերն ու դուրս բերել արևին սարերի հետևից . . .

Քամին իրեն սպասել չտվեց . արևը դուրս լողաց իր թաքստոցից, թուխպերը կորան-կորսվեցին ու խնդության երգ հյուսեց սաղարթախիտ անտառը:

Միայն թե ծառը մնաց մեծ ճամփու վրա, չոքած, գծուծ, խեղճ ու մոլոր:

Այս բանն ինձ պատմում են մենակ բազկատարած ծառերը մեծ ճամփու վրա չոքած:

1903 թ .